

ՀՏԴ: 801
ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿ 19-ԻՆ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ
Մ.Բ. Յարամիշյան

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

19-րդ դարի առաջին կեսի հայ դպրոցի և մանկավարժական մտքի ու մեթոդիկայի մասին արդեն խոսվել է տողերիս հեղինակի »Գրաճանաչության մեթոդը 19-րդ դարի առաջին կեսին« խորագրով հոդվածի մեջ:

Սույն հոդվածում փորձ է արվում լուսաբանելու նշված ժամանակահատվածի ներկրող կենդի գրաճանաչության ուսուցման պատմության մի էջը:

Լեզվի ուսուցման հիմքը կազմում է գրագիտության ուսուցումը: Հայտնի է, որ նրկար դարեր /մանավանդ միջնադարում / ինչպես Արևմտյան Եվրոպայում ու Ռուսաստանում, այնպես էլ մեզ՝ հայերիս մոտ, սովորողների ճնշող մեծամասնության համար ուսուցումը դպրոցում փաստորեն սահմանափակվել ու ավարտվել է սոսկ գրագիտության ուսուցմամբ, ընդ որում այդ «գրագիտությունը» շատ հաճախ սպառվել է մի կնրպ կարդալ իմանալով. գրելու «արվեստին» նրբեմն այդպես էլ չէին հառնում:

Այս հանգամանքը մեծ չափով բացատրվում էր առհասարակ ուսուցման և մասնավորապես գրագիտության ուսուցման մեթոդների տաժանելի դժվարությամբ: Մրանով էլ պիտի բացատրել այն, որ մի շարք նրկրներում առաջավոր մանկավարժները որոնում են գրագիտության ուսուցման ավելի հեշտ ու թացիոնալ մեթոդ, որպիսին դառնում է 19-րդ դարից կիրառվել սկսող հնչական մեթոդը:

Ռուսաստանում հնչական մեթոդի կիրառման և տարածման համար 19-րդ դարի 60-ական թվականներին պարտական են առաջին հերթին Կ. Ուշինսկուն: Հայերի մոտ այս նույն դերը կատարել է Խ. Աբովյանը, որը դեռ 19-րդ դարի 30-ական թվականների վնրջերին այդ մեթոդով կազմում է իր «Նախաշավիղը»: Դրանով իսկ Խ. Աբովյանը դառնում է հնչական մեթոդի առաջին կիրառողը և քարոզողը Անդրկովկասում և առաջիններից մեկը Ռուսաստանում:

Նա գտավ այդ մեթոդը, որը, սակայն, ժամանակակիցների կողմից դիմավորվեց սրերով և իր ցավալի կորստից հետո միայն գնահատվեց արժանիորեն:

Տառահեղական մեթոդի խիստ քննադատությունը Խ.Աբովյանը տալիս է իր հայտնի «Խաղարկություն մանկանց»-ում՝ խոսելով աշակերտի անուհից, որը պատրաստ է ամեն բանի, միայն թե կարողանա ազատվել դպրոցից, տառերի անունների մնրենայական, տանջալի սնրտումից, դրանցից վանկեր ու բառեր կազմելու ոչ պակաս տանջալի աշխատանքից: «Նախաշավիղի» առաջաբանում Աբովյանն այսպես է արտահայտվում հին ու նոր մեթոդների մասին. «Խնդրեմ ի փառս Աստուծո, ի բաց թողուլ գլիմար անվանակոչություն տառից այբ, բեն, գիմ, դա, ըթ և այլն. գամենայն տառս պարտ է ըստ բնական հնչմանն արտասանել»: Սա փաստորեն հնչական մեթոդն է, որով մեծ թափ է ստանում հայոց լեզվի սկզբնական ուսուցումը: Այդ մեթոդի մուտքը հայ դպրոց մի ամբողջ հնդաշրջում է մայրենի լեզվի մեթոդիկայում: Համարյա նույն մտքին ենք հանդիպում 1861 թ. Թիֆլիսի գիմնազիայի աշակերտների կողմից լույս ընծայած «Այբբենարան հայերեն լեզվի», իսկ հետագայում 1869 թ. Պետերբուրգի մի խումբ ուսանողների կողմից ստեղծված «Հայերեն գրել-կարդալ ուսուցանելու իրահանգ»-ներում, ուր շարունակվում է բարձրացվել հնչական եղանակին անցնելու անհետաձգելի պահանջը, և մասնավորապես գրված է. «Ռրպեսզի նրկյան հեշտությամբ կարդա,բնավ հարկավոր չէ տառերն այնպես անվանել ինչպես սովորում ենք անվանել /օրինակ՝ կատու= կեն+այբ=կա, տյուն+ո-վյուն=ու=տու /այնպես, ինչպես նորա բառերի մեջ ասվում,արտասանվում են, լսվում են, հնչվում են»: (1)

Պետերբուրգի հայ ուսանողների «Հրահանգ»-ից քաղված այս հատվածը այնքան նման է Աբովյանից քիչ առաջ ընրված մտքին, որ նթե չկասկածենք, թե արդյոք Աբովյանի

«Նախաշավիղը» կարող էր նրանց ձեռքը ընկած լինել, կենթադրելիք, թե շարադրվել է նրա ազդեցության տակ:

Իր «Դիտողություններ» նոր հայերեն լեզվի տաքրական գրքի նպատակների մասին» հոդվածում Աբովյանը «Նախաշավիղի»՝ հնչական մեթոդով ստեղծած իր գրքի կառուցման սկզբունքների մասին գրում է. «Այսպիսով, ես գլխավոր ուշադրությունը դարձրի այն բանի վրա, որ հենց գրքի սկզբում, Նիմայների ու Ստեֆաննի սկզբունքներով ցուցում տամ կարդալու-գրելու մասին և հնչական մեթոդը ցույց տամ, որ նախ ես ինքս մի քանի մասնավոր աշակերտների վրա փորձել էի և լավագույն արդյունքի էի հասել, այնպես որ հազիվ 5-6 տարեկան երեխաները տառածները ճանաչելուց հետո իսկույն կարողանում էին ամբողջ բառեր ու խոսքեր կազմել և մի քանի օրում սկսել հայերեն ու ռուսերեն կարդալ»: (2)

Աբովյանն առաջինը հայ կյանքում, ժխտելով հնադարյան տառահնգական մեթոդը, սկզբնավորելով հնչական մեթոդը, հաստատում է, որ մեթոդը կիրառելիս վերցրել է նկրտական դպրոցի արականի կան է «Երեխաների մտածելու և խոսելու ունակությունը դուրիս նդանակով գործացնել կարողանալու նպատակով ես աշխատում էի ուսուցիչներին այնպիսի ցուցումներ տալ, որ կան Նիմայների, Կամպենի և Կրաուզի մտավարժությունների մեջ» /3/:

Թե որքան մեծ է եղել այս հարցում Աբովյանի դերը, երևում է հենց միայն այն բանից, որ հնչական եղանակը, 19-րդ դարի 70-ական թվականների սկզբից մուտք գործելով դպրոցները, դեռ երկար ժամանակ համառ դիմադրության է հանդիպում հնավանդ մանկավարժների կողմից: Հայ պարբերական մամուլում բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ «Հին եղանակը՝ գին, այբ-գա, բեն, ինի, ծա-քիծ, դեռևս տիրապետում է այստեղ /խոսքը գնում է Վլադիկավկազի ծխական դպրոցի մասին/: Իսկ մի ուրիշ վկայությամբ նույնիսկ 80-ական թվականներին ուսուցման հին եղանակը մնացած է եղել «Խույ ու խավար անկյուններում»:/4/:

«Նախաշավիղի» մեթոդական ներածականում Աբովյանը հանգամանորեն բացատրում է իր մեթոդի էությունը, ուսուցչին տալիս է մանրամասն ցուցումներ, թե այդ մեթոդը ինչպես պետք է կիրառել: Դասագիրքը, որ այբբենարան և ընթերցարան է սիսթամանակ, նոր երևույթ էր հայերեն լեզվի՝ մինչ այդ լույս տեսած գրաբար, կրոնական նյութերով լի, ծանրամարս և տաղտկալի դասագրքերի համեմատությամբ:

Իմիջիայուց, պետք է նկատել, որ Աբովյանն ինքն է սկսել «Նախաշավիղը» տարածել ուսուցչության շրջանում: Պերճ Պողոյանը իր «Հուշկներ»-ում վկայում է այդ մասին: «Գյուղական վարժապետներ» վերնագրի տակ Պ.Պողոյանը մի մեծ հոդվածաշար տպագրեց «Արձագանք»-ում: Վերջին հոդվածներից մեկում Պողոյանը պատմում է Աբովյանի այցելությունն Աշտարակի դպրոց, ուր Պողոյանը սովորելիս է եղել: Աբովյանը, Պողոյանի վարժապետին դիմելով, ասում է. «Ես քեզ մի գիրք կորկեմ, վարժապետ, կարելի է դու նրանից մի բան հասկանաս և այնպես սկսես սովորեցնել...այն գրքի մեջ իմ ասած դաստավության եղանակը մանրամասնորեն նկարագրած է, այնտեղ կտեսնես, որ ավելի հեշտ է երեխային տառերի հնչյունների հետ ծանոթացնել, հեշտունեքով ձայները միացնել, քան թե այբ, բեն անուններ տալով, այն գիրքն իմ շինածն է և աշխարհաբար է, դու նրա առաջաբանը լավ կարդա» /5/: Ինչպես հաստատում է Պողոյանը, Աբովյանն իր խոստումը կատարեց. վարժապետին ուղարկեց գիրքը, մեկն էլ՝ Պողոյանի առաջին դասարանի համար պարգև:

Աբովյանի մեծ ծառայությունը հնչական մեթոդի խնդրում ամենից առաջ այն է, որ նա համարձակորեն հռչակեց, քաղոզեց այդ մեթոդը, քացատրեց նրա էությունը, ինչպես և կարողացավ՝ այն հաջողությամբ կիրառել իր դասավանդման պրակտիկայում: Նա առաջ տարավ հայոց այբուբենի ուսուցման մաշտոցյան մեթոդը՝ տառահնգական փուլը բացառելով և հնչական փուլը երկարաձգելով. Նա առաջինը հայ իրականության մեջ փորձեց ստեղծել մեթոդական այբուբենի ուսուցողական տարբերակը՝ ծառանալով սրբացած այբուբենի կույր հետևորդների հոծ բանակի դեմ:

Հայ ժողովրդի լավագույն գավալի անտրանալի և շնորհակալ գործի գնահատությունը կարելի է համարել գերմանացի ճանապարհորդ Մ.Վագների խոսքը, որը դեռևս 1843

* Այդ մասին մանրամասն տես Մ.Աբովյանի «Նախաշավիղը» որպես գրաճանաչության ուսուցման 1-ին փորձ, Արցախ, 1992թ., N2-3, Ստեփ., էջ 38-40:

թվականին Թիֆլիսում այցելում է Աբովյանի բացած դպրոցը և մեծ հաճությամբ արձանագրում. «Այս դպրոցը շատ անգամ գացի, ու հայ տղոց յառաջադիմությունը վրայ շատ զարմացայ: Տասը տասնուչորս տարուան տղաք աղեն կկարդան ու կը գրեն հայերէն, վրացերէն, թաթարերէն, ռուսերէն, գերմաներէն, գաղղիերէն: Ստուգիվ շատ զարմացայ» /6/:

Մ. Աբովյանի այս բարձր կարծիքը օբյեկտիվ է, քանի որ խ. Աբովյանն առաջին ռուսահայն էր, հայ դպրոցի սրտացավ ու հասկացող բարեկամը, որ ճանաչել էր գերմանական դաստիարակությունը և ուսուցման բնական ու հեշտ միջոցները յուրացրել էր Դորապատում: Եթե բախտը ժպտար Աբովյանին, և նա իր հայրենիքում գտներ ուշադիր վերաբերմունք դեպի իր ընդունակություններն ու բերած գիտելիքների պաշարը, այն ժամանակ հայ դպրոցը դեռևս 19-րդ դարի 40-ական թվականներին, Լեռնի արտահայտությամբ... անվիճելի ճշմարտություն դարձած կլիներ» /7/:

Սակայն դա, ցուրտ, տեղի չունեցավ, և զրաճանաչության ուսուցման նոր մեթոդ ստեղծվելու խ. Աբովյանի բարձրացրած և հետագայում հայ նշանավոր մանկավարժ-մեթոդիստների կողմից շատ թե՛ չափով արժարժած հարցը մնում էր որպես ամենագլխավոր նյութը տարրական ուսուցման գործում:

Շարունակվում են որոնումները զրաճանաչության մեթոդի կատարելագործման ուղղությամբ:

Մեթոդի որոնման և զարգացման ճանապարհին տալագրվում են այլևայլ այբբենարաններ, որոնցից, սակայն, ամենաուշագրավն ու ողջունելին 1871 թ. Թիֆլիսում լույս տեսած Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու, առաջին տարի» դասագիրքն է, որը նոր ժամանակի, նոր ուղղության նախակարգված էր, և որը քաղաքացիության իրավունք տվեց հնչական մեթոդին:

Ն. Տեր-Ղևոնդյանի այբբենարան-դասագիրքը, կազմված լինելով հնչական մեթոդով և իր վրա կրելով ռուս նշանավոր մանկավարժ Կ. Ռիշինսկու «Ромное слово» դասագրքի ազդեցությունը, գալիս էր բավարարելու տարրական քերականության համեմատաբար ավելի կատարյալ դասագրքի կարիքը, կարիք, որ գնալով ավելի ու ավելի էր զգացվում:

Դասագրքի այս պահանջը մասնակիորեն բավարարելու նպատակ էր հետապնդում նաև համարյա միաժամանակ լույս ընծայած Կ. Ռիշինսկու մյուս ոչ պակաս նշանավոր դասագրքի՝ «Летский мѣсяц»-ի նրկու մասերի հայերեն թարգմանությունները՝ առանց ինքնուրույնացման փորձերի, առանց նույնիսկ հեղինակի անվան: Նույն Ռիշինսկու նմանությամբ Ն. Տեր-Ղևոնդյանը ստեղծում է մայրենի լեզվի թե՛ ընթերցանության և թե՛ քերականության դասագրքեր:

Իր դասագրքի առաջաբանում հեղինակը ցույց է տալիս տարրական քերականության օգտակարությունը մայրենի լեզվի խոր ու հաստատուն յուրացման համար:

Եվ տեղին, քանզի մայրենի լեզուն մտավոր զարգացման հիմքն է և բոլոր գիտելիքների գանձարանը: Ամենի մի հասկացողություն նրանից է սկսվում, նրա միջով է անցնում և նրան է վերադառնում: Մայրենի լեզուն ընդունելով տարրական դպրոցի ուսուցման զլխավոր մասը՝ հենց այդ պատճառով էլ տարրական դպրոցի ուսուցման համար կազմած գրքերը հիմնականում անվանվում էին «Մայրենի լեզու», չնայած որ նման գրքերն ընդգրկում են ոչ միայն քերականություն, այլ նաև մի ամբողջ շարք գիտելիքներ իրական աշխարհի մասին:

Ն. Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու» դասագրքի գործադրած նդանակի առանձնահատկությունն այն էր, որ բարոյախոսական ու իրազնական դասերը կցվում են լեզվի դասերին, այսինքն՝ տրվում է բարոյախոսական պատմություն, որի զլխավոր առարկան իրազնության նյութը անտր է լինի, իսկ այդ առարկայի անունը անտր է վերուժով: կառույն ու գոնը սովորեցնելու համար /ընդգծումը մերն է- Յ.Մ./:

Այսպես, օրինակ. «Ագահ շունը» թեմատիվ նկարի վրա անցկացնելով դասի բարոյախոսական և իրազնական մասը /որտեղ, իմիջիպայոց, ավելորդ և նրվանների ուշադրությունը անհարկի շնորդ շատ բան կա /ուսուցիչն ասում է, որ մինչև հիմա զննվեց շունն եղևն առարկա, իսկ հիմա կփորձենք գննել այս եղևն առա: Որպես առարկա քննելիս՝ մենք օգտվեցինք մեր տեսողությունից, այսինքն՝ շան նկարը տեսանք, բնութագրեցինք, իսկ որպես առա քննելիս՝ անտր է իմանանք, թե ինչպես է կազմված շուն առա: Դրա համար պետք է

ուշադիր և լավ լսել: Այնուհետև ուսուցիչը մի քանի անգամ կրկնում է շուն բառը՝ նրկարացնելով և շնչտելով մերթ առաջին /շ/,մերթ նրկորդ /ու/, մերթ էլ նրկորդ /ն/ հնչյունը, այսինքն՝ բառը հնչյունային վերլուծության է ենթարկում /1/: Գույց տալիս, որ 2 և 3 հնչյունները բաղաձայն են,իսկ 4-ն՝ պարզ է,ձայնավոր /2/: Խորհուրդ է տալիս այդ բաղաձայններն անաբայման արտատանել առանց ը-ի: Սա բառի վրա տարվող աշխատանքի առաջին կետն է՝ նրկու մասից բաղկացած: Ապա տալիս է անծանոթ բառեր, ասենք՝ մուկ, կատու, տուն, նոր, էշ և այլն ու պահանջում դրանցում գտնել ծանոթ հնչյունը /3/: Այնուհետև պահանջում է այդ ծանոթ հնչյուններով /շ,ու,ն/ սկսվող բառեր գտնել:

Վերջին աստիճանում ուսուցիչը մոտենում է գրատախտակին և նախ՝ օդի մեջ՝ մատով, ապա գրատախտակին ցույց տալիս, թե ինչպես սկսեց և ինչպես վերջացրեց կոնկրետ այս կամ այն տառի գրությունը: Հետո հանձնարարում է, որ աշակերտները իրենք գրեն:

Ինչպես տեսանք, բառի վրա կատարվող աշխատանքն անցնում է չորս աստիճան.

- 1.Վերլուծություն առարկայի անվան,
- 2.Հնչյունների համեմատություն,
- 3.Ծանոթ հնչյունի գտնելն անծանոթ բառում,
- 4.Ծանոթ հնչյուն-տառի գրությունը:

Այս ձևով ուսուցիչը անցնում է տասը դաս, որոնց մեջ, որպես ուսումնասիրվող կարևոր բառեր՝ հանդես են գալիս շուն, էշ, բադ, սագ, հավ, օձ, կատու, ոգնի, մեղու, ճանճ՝ բառերը, առանց դասագրքերին դիմելու, քանի որ գործ ունեն միայն նկարների և հնչյունների հետ: Այս ուսող դասերի ընթացքում նա աշակերտներին ծանոթացնում է քսաներկու հնչյունի հետ /շ, ու, ն, է, շ, ք, դ, ս, գ, հ, վ, օ, ձ, կ, տ, ո, գ, ի, մ, ե, ճ/, սակայն զրել է տալիս դրանց միայն մի մասի տառերը: «Ոգնի» բառը պարունակող նկար-պատմությունն անցնելիս ուսուցիչն աշակերտներին հասկացնել է տալիս, որ թեն ո-ն բառը հնչյուն է, բայց բառի սկզբում «վօ» հնչյունի համար օգտագործում ենք մի նշանագիր, այն է՝ ո, ոչ թե գրում նրկու տառով: 11-րդ դասը նորից ստիպում է անդրադասնալ ո տառին. այստեղ ուսուցիչը ցույց է տալիս, որ ո և օ տառերը բառի սկզբում պահում են իրենց հնչման ձևը /վօ և օ/, իսկ բառի մեջ կարդացվում են միանման օ/: Նույն ձևով են բացատրվում նաև ե,կ,է հնչյուն-տառերը: Հեղինակը աչքաթող չի անում նաև բառերի գրության ձևերը, և 13-րդ դասից սկսած տալիս է գլխատառերի գրության ձևը:

Դասագրքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սկզբնական շրջանում նոր անցվող տառը առանձին, ընդգծված ձևով չի տալիս՝ բաղաձայնի հետ լսվող ը-ից խուսափելու նպատակով: 1

Ինչպես արդեն նշել ենք, Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու» այբբենարանը, լինելով Կ.Ուշինսկու «Родное слово»-ի հետևողությամբ կազմված և մեծամասամբ թարգմանված դասագիրք,այնուամենայնիվ, աչքի է ընկնում իր ազգային ոգով,գրքի հայ կազմողը աշխատել է մոտիկ մնալ հայոց լեզվի հարազատ ոճերին,ունի նույնիսկ շատ ինքնուրույն հատվածներ: Այս առումով «Մայրենի լեզու» առաջին քարն էր, ռուսական նոր ազդեցության առաջին նրկույթը՝:

Ն.Տեր-Ղևոնդյանի այբբենարանում կան նաև հետաքրքիր միջոցներ ու նդանակներ: Հետագա հրատարակությունների ժամանակ նա անընդհատ փոփոխության է ենթարկել՝ բարելավելով ու հարմարեցնելով ժամանակի պահանջներին: Այսպես, 1913թ. հրատարակության մեջ /թվով 27-րդ/ մտցված են այնպիսի փոփոխություններ, որ այբբենարանը կարողանա միաժամանակ ծառայել հայախոս և օտարախոս հայ մանուկներին: Այդ նպատակով նա սկզբից տվել է այնպիսի բառեր,որոնք ունեն թողորին հասկանալի իմաստ: Այդպիսիք են ձայնարկությունները՝ ա՛յ,օ՛յ,ո՛յ,վա՛յ,է՛յ և այլն: Այբբենարանը մանուկներին հայտնի էր նաև «Արփիկ» վերտառությամբ:

Խ.Աբեյանի հնչական ու Ն.Տեր-Ղևոնդյանի կողմից զարգացնելու հետևանքով ճանաչում գտած նոր մեթոդի հետագա կատարելագործման և տարածման գործում որոշակի

* Ընդհանրապես ը հնչյունի գործածությունը բաղաձայնների արտաբերման ժամանակ նշել է վիճաբանության առարկա: Այդ մասին խոսել ենք Ղ.Ազայանի մեթոդն ուսումնասիրելիս:

դեր են խաղացել նաև Գ.Տեր-Ալեքսանդրյանը, Ա.Երիզյանը, Զ.Գրիգորյանը և ուրիշներ, որոնք Աբովյանի և ռուս մեթոդիստների հետևողությամբ հնչյունային մեթոդով պարապելու նոր այբբենարաններ են ստեղծել, կազմել են մեթոդական ուղեցույցներ ու հանձնարարականներ, դաս են տվել դարձոցներում և այլն:

Ամեն մի դասագիրք խոսում է լինում, նրբ ունենում է իր մեթոդական ուղեցույցը: Այսպես, Ն.Տեր-Ղևոնդյանի դասագիրքն ուներ առաջաբան, բայց ոչ մեթոդական ուղեցույց, որի պատճառով էլ դժվարանում էր նրա օգտագործումը: Հեղինակը նույնպես գրում էր մեթոդական ուղեցույցի կարևորությունը և մի առիթով նշում, որ խիստ կարիք է զգացվում մանրամասն բացատրական ձեռնարկի, մի բանալու: Նաև խոստանում է հայոց լեզվի ուսուցիչներին տալ մեթոդական ուղեցույց, որը, ցավոք, փ իժնակի չի լինում իրականացնելու:

Վերը ասվածին ցանկանում ենք ավելացնել նաև այն միտքը, որ մայրենի լեզվի ուսուցման համար թեպետ մեծ նշանակություն պետք է տալ դասագրքին, ինչպես նաև մեթոդական ուղեցույցին, բայց չպետք է սահմանափակել կարևոր գործոններից մեկը՝ ուսուցչի դերն ու նրա ինքնուրույնությունը: Ի՞նչ արժեն լավագույն դասագրքին ու մեթոդական ուղեցույցները, եթե դրանք չեն գտնվում նույնքան որակյալ կադրերի ձեռքին:

Այս հարցում գովասանքի է արժանի Պետերբուրգի համալսարանը, որի հիմնահարցերից մեկը հայագետ մասնագետների պատրաստման գործն էր: Այս պրոբլեմը անխցելիորեն առնչվում էր համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի գործունեության հետ: Դեռևս 1845թ. համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետին կից առանձնացվում է արևելյան բաժանմունքը, հաստատվում են անդրկովկասյան լեզուների ամբիոնները, իսկ 1855-ից այն վերակառուցվում է արևելյան լեզուների ֆակուլտետի: Ի տարբերություն ռուսական այլ կրթական օջախների՝ Պետերբուրգի համալսարանը, տարբեր գիտությունների գծով մասնագետներ պատրաստելու հետ մեկտեղ, որոշակի դեր է խաղացել հայագետ գիտնական մանկավարժներ պատրաստելու գործում: Այս համալսարանից դուրս եկած փայլուն հայագետները գիտահետազոտական աշխատանքներում, մանկավարժական գործունեությամբ առաջ մղեցին հայագիտությունը, բարձրացրին պետականությունից զուրկ հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչողության զգացումը, բարերար ազդեցություն ունեցան հայոց լեզվի ու գրականության դասավանդման դրվածքը բարելավելու գործում:

19-րդ դարի 60-ական թվականների հեղաբեկումների ժամանակաշրջանում Պետերբուրգում սովորող հայ նրիտասարդությունը որոշակի դեր է խաղում հեղափոխական դեմոկրատների, ինչպես նաև ռուս մանկավարժության նահապետ Կ.Ուշինսկու, Լ.Տոլստոյի և նրանց հետևորդների գաղափարները պրոպագանդելու, տարբեր առարկաների դասավանդմանը և ընդհանուր մանկավարժական հիմնահարցերին վերաբերող ուսումնամեթոդական գրականություն ստեղծելու ասպարեզում: Այսպես, 1869թ., ինչպես վերևում նշել ենք, համալսարանի ուսանողությունը անվանի մանկավարժ Ս. Մանդինյանի գլխավորությամբ Ուշինսկու ռուսաց լեզվի մեթոդական ուղեցույցի, Կորֆի և Պաուսոնի աշխատությունների հետևողականությամբ կազմում է «Հայերեն կարգալ և գրել ուսուցանելու հրահանգ»՝ հնչական մեթոդով, ինչպես նաև շարժական տառեր տարածում հայկական դպրոցներում և դրանով իսկ՝ նոր մղում և ուժ են տալիս 19-րդ դարի առաջին կեսին գրաճանաչության ուսուցումը հնչական եղանակով կազմակերպելու՝ Ն.Աբովյանի սկսած գործին:

«Հրահանգն», ասես, գալիս էր վերացնելու ուսումնասիրվող ժամանակաշրջանում հրատարակված գրքերի թերությունը, այն է՝ գրաճանաչության դասավանդման մեթոդական ուղեցույցների պակասը: Սակայն այդպես չեղավ, քանի որ տվյալ ժամանակահատվածում գոյություն չունեի դպրոցական կրթության կայուն համակարգ, մանկավարժական միտքն ու մեթոդական փորձը ցարքուցրիվ էին, ոչ ի մի հավաքած: Ասվածին եթե ավելացնենք նաև այն հանգամանքը, որ շատ թե քիչ նշանավոր մանկավարժներ ձգտում էին իրենց հրատարակած դասագրքերով ու մեթոդական ուղեցույցներով հատկապես և միայն իրենց մեթոդներն առաջ քաշելու տառաձեռք, հասկանալի կլինի, թե ինչու 1869 թ. հրատարակված «Հրահանգը» մեթոդական ուղեցույց չհանդիսացավ 1871թ. հրատարակված Ն.Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու, առաջին դասարան» այբբենարան - դասագրքի համար, չնայած որ նրկուսն էլ առաջնորդվում էին Աբովյանի

կողմից հռչակած հնչական մեթոդով:

Մենք արդեն խոսել ենք Ն.Տեր-Ղևոնդյանի այբբենարան-դասագրքի մասին, նկարագրել հնդկական կողմից առաջ քաշած գրութուցման դասը և մեթոդը, ուստի շատ համառոտ կերպով կանգ կառնենք «Հրահանգ»-ի կողմից նախատեսած գրաճանաչության դասի նկարագրության վրա, որը բավականաչափ նպաստեց հնչյունային մեթոդի տարածմանը:

Ըստ «Հրահանգի» նախատեսվում էր գրաճանաչության դասը վարել հետևյալ կառուցվածքով.

- 1.Բառի հնչական վերլուծություն,
- 2.Գրություն,
- 3.Գրածի ընթերցանություն,
- 4.Ճարժում տառերից բառերի կազմում և նրանց վերլուծություն,
- 5.Այդ բառերի գրություն,
- 6.Գյուտ այնպիսի բառերի,որոնց մեջ լինի պահանջված հնչյունը:

Ինչպես տեսնում ենք, «Հրահանգը» որոշակի տարբերություններ ունի Տեր Ղևոնդյանի վարած դասի կառուցվածքից, և այդ տարբերությունները «Հրահանգի» օգտին են, քանի որ նրա նախատեսած գրաճանաչության դասի կառուցվածքը գրիթե ժամանակակից կառուցվածք է և այն, անկասկած, դրական ավելի շատ ազդեցություն է ունեցել նոր մեթոդի տարածման գործում, չնայած այդ տեսակետի հնդկական և ուղեցույցի ղեկավար Ս.Մանդինյանը հետագայում փոխեց իր կարծիքը և դարձավ իր իսկ նախընտրած մեթոդի հավաքակառուցներից մեկը:

Եզրակացնենք:

1.Հայ դպրոցում գրաճանաչության ուսուցման հնչական մեթոդի գործադրման բազմաթիվ փորձեր են եղել:

2.Հնչական եղանակով գիր սովորեցնելը բոլորովին նորություն չէր մեր մեթոդիկայի պատմության մեջ. այդ մեթոդը ուսումնասիրեց և հռչակեց Նրջանկահիշատակ Խաչատուր Աբովյանը դեռևս 19-րդ դարի առաջին կեսին՝ փաստորեն դարերի փոշին թոթափելով հայ իրականության մեջ հնչական մեթոդով դասավանդած մեր առաջին ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցից:

3.Գրաճանաչության մեթոդի ուսումնասիրության և զարգացման շարժումն այլևս կանգ չառավ: Այնքանից մոտ քսան տարի հետո Թիֆլիսի գիմնազիայի հայ աշակերտները /Գ.Տեր-Ավեստանդյանց, Ա. Երիզյանց, Զ. Գրիգորյանց և ուրիշներ /վերանորոգեցին հնչական եղանակը մի այբբենարանով և սկսեցին ձրի դաս տալ Թիֆլիսի ծխական դպրոցներում, որ այդ նոր ձևն ընդհանրացնեն: Նույն ժամանակ Պետերբուրգի հայ ուսանողները ևս հրատարակեցին մի այբբենարան դարձյալ հնչական եղանակով:

4.Մանկավարժական ու մեթոդական մտքի փայտակման շրջան էր ուսումնասիրվող էտալը նաև ռուսական իրականության մեջ,ուր արդեն Ռեշինսկին իր այբբենարանով մեծ հռչակ էր ստացել ոչ միայն Ռուսաստանում,այլ նրանից դուրս: Եվ ահա Նիկողայոս Տեր-Ղևոնդյանը թարգմանեց Ռեշինսկու «Родное слово» այբբենարանը և վերջինիս նմանությամբ հրատարակեց իր «Մայրենի լեզու, առաջին տարի» դասագիրքը 1871թ.: Սա մի առաջընթաց քայլ էր դեմոկրատական մտնկավարժության ու հայ ազգային դպրոցի զարգացման ճանապարհին:

5.Սակայն գրաճանաչության մեթոդի հստակեցման ու հետագա զարգացման ղեկըրումներում վերոհիշյալ աշխատանքները ցանկացած արդյունքի չհասան, որովհետև դրանք բոլորն էլ միայն գրագիտության ուսուցման,այսինքն՝ նրխաներին միայն գրաճանաչ դարձնելու նպատակ էին հետապնդում և, ըստ էության, միայնցից շատ քիչ էին տարբերվում թե՛ բովանդակությամբ և թե՛ մեթոդական մշակմամբ: «Հնից էլ տարբերվում էին միայն նրանով, որ այդ ասելու տեղ ասել էին տալիս ա, քեն ասելու տեղ՝ թը» /8/ :

6.Վերոհիշյալից պարզ է,անկասկած,որ նշանավոր,թե աննշան դեմքերից շատերը այս կամ այն չափով նպաստել են հնչյունային մեթոդի տարածմանն ու արմատավորմանը հայ դպրոցում, բայց այդ մեթոդի օգտին ավելի վճռական ու հիմնավոր խոսքը դեռ մնում էր ասվելու:

հնչյունային մեթոդ, որի մասին մանրամասն խոսվում է «Գրուսուցման Ղ. Աղայանի մեթոդը» ատենախոսության մեջ (Յ.Մ):

Ամփոփում

19-րդ դարը հայ մանկավարժության պատմության և մեթոդիկայի բեղուն ժամանակաշրջանն էր: Այս էտապում հանդես եկող շատ թեմ քիչ նշանավոր դեմքերը ուղղակի կամ անուղղակի կապ են ունեցել դպրոցի, մանկավարժության հետ:

Հայ իրականության մեջ մանկավարժական հին, հետադիմական հասկացողությունների դեմ առաջին խիզախ մարտնչողը նկոյ է Ն.Աթուկյանը՝ նոր, առաջավոր կրթական գաղափարներից ոգեշնչված պատգամաբերը: Նա, հանդես գալով տառահեղական մեթոդի խիստ քննադատությամբ, ուսուցումն ավելի մատչելի դարձնելու նպատակով սկզբնավորում է հնչական մեթոդը և այդ մեթոդով կազմում իր «Նախաշավիղ» այբբենարան-դասագիրքը:

Ծարունակվում են որոնումները գրաճանաչության մեթոդի կատարելագործման ուղղությամբ: Հնչական մեթոդի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ բավականին ջանքեր թափեցին Ստ.Նազարյանը, Ն.Տեր-Ղևոնդյանը և ուրիշները: Մակայն գրաճանաչության մեթոդի հստակեցման ու հետագա կատարելագործման դեգերումներում աշխատանքները ցանկալի արդյունքի չհասան, որովհետև դրանք բոլորն էլ միայն գրագիտության ուսուցման, այսինքն՝ երեխաներին միայն գրաճանաչ դարձնելու նպատակ էին հետապնդում և, ըստ էության, միմյանցից շատ քիչ էին տարբերվում թե՛ թովանդակությամբ և թե՛ մեթոդական ձևերով: Այս գործում իր թարմ ու կայուն խոսքն ասաց հայ մանկավարժ-մեթոդիստ Ղազարոս Աղայանը:

Резюме

19-ый век был плодотворным периодом для развития армянской истории педагогики и методики.

Многие известные и не очень известные личности, публикующие свои труды на этом этапе, имели прямую или косвенную связь со школой, педагогической наукой.

Х.Абовян в армянской действительности был одним из первых смелых борцов против остальных педагогических методов. Он заложил основу фонетического метода и, используя его, составил книгу-азбуку “Нахашавих”.

В развитие и совершенствование звукового метода большой вклад внесли Ст. Назарян, Н.Тер-Гевондян и др. Свое живое и твердое слово в этом деле сказал также армянский педагог-методист Г. Агаян.

Գրականություն

1. Ռ.Զարյան, Արուսյանի կյանքը, Երևան, 1954թ. 136 էջ, էջ ԺԳ:
2. Ս.Արուսյան, ԵԼԺ, հատ 5, Երևան, 1950թ., 508 էջ, էջ 49:
3. Նույն տեղում:
4. Ռ.Զարյան, Աթուկյանի կյանքը, Երևան, 1954, 136 էջ, էջ ԺԴ:
5. Նույն տեղում, էջ 66:
6. Ա.Աղադանյան, Գրաճանաչության ուսուցման տնայական հիմունքները, Երևան, 1970, 219 էջ, էջ 3:
7. ԼԷԾ – Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837-1912 թթ, Թիֆլիս, 1914, 585 էջ, էջ 233:
8. Հայ մանկավարժներ, գիրք Ա, Երևան, 1958, 622 էջ, էջ 45